

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան Մերգել Մկրտչյանը պահանջել է անվավեր ճանաչել ԼՂՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ Ասկերանի տարածքային ստորաբաժանումում (այսուհետ՝ Կադաստր) Աշխեն Մովսեսի Մկրտիչյանի անվամբ 21.10.2004թ. կատարված սեփականության իրավունքի գրանցումը, Աշխեն Մկրտիչյանի 09.02.2009թ. կազմած կտակը՝ վավերացված Ստեփանակերտի տարածքային նոտարի կողմից, Աշխեն Մկրտիչյանի և Հրանտ Դանիելյանի միջև կնքված նվիրատվության պայմանագիրը և իրեն ճանաչել Ասկերանի շրջանի Խնածախ գյուղում գտնվող բնակելի տան, տնամերձ հողամասի և վարելահողի նկատմամբ ժառանգությունն ընդունած ժառանգ:

ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը (այսուհետ՝ Դատարան) 09.08.2009թ. վճռով հայցը բավարարել է:

Վերաքննիչ դատարանը 25.09.2009թ. որոշմամբ նշված վճիռը թողել է օրինական ուժի մեջ:

Գերագույն դատարանը 17.12.2009թ. որոշմամբ Վերաքննիչ դատարանի 25.09.2009թ. որոշումը բեկանել է և գործն ուղարկել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

Դատարանը 17.12.2010թ. վճռով հայցը մերժել է:

Վերաքննիչ դատարանը 18.02.2011թ. որոշմամբ Դատարանի 17.12.2010թ. վճիռը թողել է օրինական ուժի մեջ:

Հայցվորի ներկայացուցիչ Ա. Թարխանյանը բերել է վճռաբեկ բողոք:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ս. Դանիելյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի և հիմնավորումների սահմաններում.

Դատարանը խախտել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածը, ինչի արդյունքում չի կիրառել ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածը, 1226-րդ հոդվածի 3-րդ մասը, 1227-րդ հոդվածը:

Բողոք բերող անձն իր պնդումները պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ: Դատարանի որևէ ապացույց նախապես հաստատվածի ուժ չունի, բացառությամբ նույն օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:

Ըստ բողոքաբերի Վերաքննիչ դատարանը նշել է, որ Դատարանը հիմնավոր է մերժել հայցը, որ հայցվորը չի վիճարկել Ա. Մկրտիչյանի սեփականության իրավունքի պետական գրանցման հարցը, մինչդեռ ստորադաս դատարաններն այդ հարցը չեն քննել, համապատասխան գնահատական չեն տվել, լրիվ և օբյեկտիվ չեն հետազոտել այդ գործով փաստերը:

Ըստ բողոքաբերի գործի նյութերով հաստատված է, որ հայցվոր Ս. Մկրտչյանը հոր մահից անմիջապես հետո ներկայացել է գյուղ, մնացել ժառանգական տանը, լուծել գերեզմանաքարի, ժառանգական գույքը պահպանելու, մորը ֆինանսական օգնություն ցույց տալու հարցերը, մոր համաձայնությամբ իրենց բարեկամ Պետյա Դանիելյանին թույլատրել է բնակվելու ժառանգական տանը, հոգ տանելու մոր ու տան նկատմամբ:

Բողոքաբերը գտնում է, որ հայցվորը փաստացի ընդունել է ժառանգությունը, այն տրամադրել այլ անձի օգտագործմանը, իր հաշվին կատարել գույքի պահպանման ծախսերը:

Ըստ բողոքաբերի Ա. Մկրտիչյանը գործարքի կնքման պահին ընդունակ չի եղել հասկանալու իր գործողությունների նշանակությունը կամ ղեկավարելու դրանք, սակայն դատարանները չեն կիրառել ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 311-րդ հոդվածը, հաշվի չեն

առել գործում առկա միևնույն գույքի և անձի օգտին կտակ և նվիրատվության պայմանագիր ձևակերպելը, 200.000 դրամ խնայողության առկայության պայմաններում, այդ գումարը գործով պատասխանողին հանձնելու և միևնույն ժամանակ սոցապահովության նախարարից օժանդակություն խնդրելու համար դիմում ներկայացնելու վերաբերյալ հիմնավոր ապացույցները:

Բողոքաբերը պահանջում է բավարարել բողոքը և N 1779/02/09թ. քաղաքացիական գործով Վերաքննիչ դատարանի 2011թ. փետրվարի 18-ի որոշումը և Դատարանի 2010թ. դեկտեմբերի 17-ի վճիռը բեկանել և հայցը բավարարել ամբողջությամբ:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանը, առարկումը և հիմքերը.

Դատարանները նյութական և դատավարական նորմերի պահանջների խախտումներ թույլ չեն տվել, հայցվոր Սերգեյ Մկրտչյանն իր հոր՝ Արգար Մկրտիչյանի մահից հետո վիճելի տան ժառանգությունը ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում չի ընդունել, Աշխեն Մկրտիչյանը նվիրատվության պայմանագրի կնքման պահին գործել է իր կամքով, հաշիվ է տվել իր գործողություններին, գիտակցել է պայմանագրի կնքման հետևանքները, գործով բացակայում են ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 301-րդ և 313-րդ հոդվածներով նախատեսված գործարքների անվավերության հիմքերը և գտնում է, որ վճռաբեկ բողոքն անհիմն է:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

1. Արգար Մկրտիչյանը և Աշխեն Մկրտիչյանը 16.03.1946թ. գտնվել են գրանցված ամուսնության մեջ:

2. 20.06.1978թ. Խնածախ գյուղում 24 քառակուսի մետր մակերեսով բնակելի տունն Արգար Մկրտիչյանին տալու վերաբերյալ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայականը:

3. Արգար Մկրտիչյանը մահացել է 02.11.1994 թվականին:

4. 16.01.1996թ. Աշխեն Մկրտիչյանը կազմել է կտակ, իր ամբողջ գույքը կտակելով որդուն՝ Սերգեյ Մկրտչյանին:

5. ԼՂՀ Ասկերանի շրջանի Խնածախ գյուղում գտնվող 78,1 քառակուսի մետր մակերեսով բնակելի տան և 0,025 հեկտար մակերեսով տնամերձ հողատարածքի նկատմամբ 18.10.2004թ. գրանցվել է Աշխեն Մկրտիչյանի սեփականության իրավունքը, իսկ 21.10.2004թ. գրանցվել է 0,65 հեկտար մակերեսով վարելահողի նկատմամբ:

6. 09.02.2009թ. Աշխեն Մկրտիչյանը վերացրել է 16.01.1996թ. կտակը և կազմել նոր կտակ՝ իր ամբողջ գույքն իր եղբորը՝ Հրանտ Դանիելյանին կտակելու մասին:

7. 19.02.2009թ. նվիրատվության պայմանագրով Աշխեն Մկրտիչյանը Խնածախ գյուղում սեփականության իրավունքով իրեն պատկանող բնակելի տունը, տնամերձ հողամասը և վարելահողը նվիրել է եղբորը՝ Հրանտ Դանիելյանին:

8. Աշխեն Մկրտիչյանը մահացել է 25.02.2009 թվականին:

9. 06.03.2009թ. գրանցվել է Հրանտ Դանիելյանի սեփականության իրավունքը Խնածախ գյուղում գտնվող 78,1 քառակուսի մետր մակերեսով բնակելի տան, 0,025 հեկտար մակերեսով տնամերձ հողամասի և 0,65 հեկտար մակերեսով վարելահողի նկատմամբ:

4. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում, Գերագույն դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման մասնակիորեն, հետևյալ պատճառաբանությամբ.

Ժառանգության բացման ժամանակ ԼՂՀ-ում գործող քաղաքացիական օրենսգրքի 549-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա փաստորեն սկսում է տիրապետել կամ կառավարել ժառանգական գույքը... իսկ նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ընդունված ժառանգությունը ժառանգի սեփականությունն է համարվում ժառանգության բացման պահից:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե այլ բան ապացուցված չէ, ապա ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա սկսում է փաստացի տիրապետել կամ կառավարել ժառանգված գույքը՝ ներառյալ, երբ ժառանգը՝

1. միջոցներ է ձեռնարկել գույքը պահպանելու և այն երրորդ անձանց ոտնձգություններից կամ հավակնություններից պաշտպանելու համար.

2. իր հաշվին կատարել է գույքը պահպանելու ծախսեր.

3. իր հաշվին վճարել է ժառանգատուի պարտքերը կամ երրորդ անձից ստացել է ժառանգատուին հասանելիք գումարները:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230-րդ հոդվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ վերաքննիչ դատարանի որոշման մեջ պետք է նշվեն՝ գործով պարզված և վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, ինչպես նաև այն օրենքը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային պայմանագրերը և այլ իրավական ակտերը, որոնցով ղեկավարվել է վերաքննիչ դատարանն որոշում կայացնելիս:

Գերագույն դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ դատարանը յուրաքանչյուր դեպքում պարտավոր է տալ որոշման փաստական և իրավական հիմնավորումները:

Որոշման իրավական հիմնավորումը կայանում է գործով հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ իրավունքի համապատասխան նորմ(եր)ի ընտրությունը և կիրառումը, նորմ(եր), որոնց հիման վրա դատարանն եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին:

Ընդ որում, որոշումում պետք է նշել նորմատիվ ակտի կոնկրետ հոդվածը, նաև՝ պատճառաբանվի տվյալ նորմի կիրառման անհրաժեշտությունը:

Այսինքն, որոշման իրավական հիմնավորումը բնութագրում է դատարանի և նրա որոշման իրավակիրառ բնույթը, ընդգծելով դատական գործունեության և դատական ակտի օրինականությունը:

Միաժամանակ դատարանը պետք է նշի այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է որոշում կայացնելիս, նաև պետք է պատճառաբանի, թե ինչու է մերժում կողմի ներկայացրած ապացույցը: Միայն նման հիմնավորումը կարող է վկայել գործի բազմակողմանի հետազոտության մասին:

Սույն գործով հայցվորը դիմելով դատարան, պահանջել է ճանաչել իր սեփականության իրավունքը Ասկերանի շրջանի Խնածախ գյուղում գտնվող 02.11.1994թ. մահացած իր հոր՝ Ա.Մկրտիչյանի ժառանգական գույքի նկատմամբ, անվավեր ճանաչել 10.10.2004թ. ԼՂՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ Ասկերանի տարածքային ստորաբաժանումում կատարված Աշխեն Մկրտիչյանի անվամբ սեփականության իրավունքի գրանցումը և 02.02.2009թ. կնքված նվիրատվության պայմանագիրը բնակելի տան, տնամերձ հողամասի և վարելահողի նկատմամբ:

Մինչդեռ դատարանները քննել են կտակի և նվիրատվության պայմանագրի վերաբերյալ հայցապահանջները, անտեսելով Ս.Մկրտչյանի հայցը՝ ժառանգությունը

փաստացի հիմքով ընդունելու և ԱԳ Կադաստրում Աշխեն Մկրտիչյանի անվամբ սեփականության իրավունքի գրանցումն անվավեր ճանաչելու մասին, պատճառաբանելով հայցվոր կողմի նման պահանջ ու ապացույցներ չներկայացնելը:

Այնինչ, գործի նյութերով Ասկերանի շրջանի Խնածախ գյուղում գտնվող բնակելի տունն ըստ օրենքի ժառանգական իրավունքի վկայականի, ժառանգություն է ստացել Աբգար Մկրտիչյանը, որը մահացել է 02.11.1994թ. և բացված ժառանգությամբ ըստ օրենքի ժառանգներ են համարվում կինը՝ Աշխեն Մկրտիչյանն և նրանց որդին՝ Սերգեյ Մկրտչյանը: Սակայն 10.10.2004թ. Կադաստրում գրանցվել է միայն Աշխեն Մկրտիչյանի սեփականության իրավունքը՝ այլ հիմքով, իսկ նշված բնակելի տանը Սերգեյ Մկրտչյանի թույլտվությամբ և մոր՝ Աշխեն Մկրտիչյանի համաձայնությամբ բնակվում է Պ. Դանիելյանը՝ իր ընտանիքով:

Նման հանգամանքներում Գերագույն դատարանը գտնում է, որ հիմնավոր է բողոք բերած անձի պնդումը, որ Վերաքննիչ դատարանն անտեսել է այն փաստը, որ հայցվորը ներկայացրել է պահանջ՝ փաստացի տիրապետմամբ ժառանգական գույքի նկատմամբ սեփականության իր իրավունքը ճանաչելու և նշված գույքի նկատմամբ Ա. Մկրտիչյանի անվամբ սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու մասին, որ դատարանները լրիվ և օբյեկտիվ չեն հետազոտել այդ գործով փաստերը, լրիվ չեն քննել ներկայացրած պահանջները:

Գերագույն դատարանը գտնում է, որ դատարանները ներկայացված հայցապահանջները լրիվ չեն քննել, գործում առկա բոլոր ապացույցները բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ գնահատության չեն ենթարկել, խախտել են ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի պահանջը, որն էլ հանգեցրել է գործի սխալ լուծման:

Գերագույն դատարանը վճռաբեկ բողոքի մյուս հիմնավորումներին՝ դատարանները նշված հայցապահանջը չքննելու պարագայում, չի անդրադարձնում և բողոքի նշված հիմքը գտնում է բավարար, Վերաքննիչ դատարանի 2011թ. փետրվարի 18-ի որոշումը սույն քաղաքացիական գործով բեկանելու և գործն ուղարկելու ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-256-րդ հոդվածներով, Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հայցվոր Սերգեյ Մկրտչյանի ներկայացուցիչ Արմեն Թարխանյանի վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2011թ. փետրվարի 18-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝

Կ. ՂԱՐԱՅԱՆ

Զ. ՕՉԱՆՅԱՆ

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝

Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ